

Եւ էր այս քաղաքս յոյժ զարմանալի եւ
ամենայն մարդկան սքանչելի. զի ոչ կղզի է
եւ ոչ ծով կամ ցամաք, այլ ի մէջ ծովու որ- 20
պէս արձանն Հերակլեայ, շինեալ բազմածախ
եւ մեծամեծ ամուր հիմամբ. զոր այնպիսի
չինուածք եւ եարուք չէ տեսեալ մարդ. եւ
զատ ի Աստուծոյ ոչ ոք կարէ շինել: Եւ ջրին
մէջն մարդապօյ անտաշ քարով եւ վիմունք 25
հիմնարկած. եւ փողոցքնին ամէն ջուր է:

ՍԱՆ ՄԱՐԲՕ

Եւ նախ զնացաք ի Սա Մարքօն, որ է
Մարկոս աւետարանիչն. եւ է աւազ եւ մեծ
եկեղեցի: Եւ կայր վերենն զմպէթին առջեւն
իրեք պղնձէ սիւն, որ ի հանդիսի աւուրս 30
անգր խաչալամ կանգնեցնեն. եւ ի վերն
սպեարէ չորս ձի ամեհի: Եւ Սա Մարքոյին
դռան բարաւորքն եւ վերենն եւ դուռն ամէն
պղինձ է. եւ այնպէս արվեստ, փորուածք եւ
քանդակք է սահմանած, որ զալամով չեն 35
կարել այլ տեղ գրել կամ նկարել. եւ քանի
մարդ որ հայէր՝ չէր յագիլ ի գեղեցկու-
թենէն: Եւ այն ձիանքն թափած զինչ ոսկի
կու փայլէին, զոր հային ի վերայ միմիանց
որպէս կենդանիք: Եւ այլ ի վեր շուրջ դու- 40
պայիցն կոփած էր եւ քանդակած ի սպիտակ
մէրմէրէ գերկոտասան առաքեալսն եւ չորս
աւետարանիչս եւ այլ սքանչելի իրս: